o **Հիփոթեքային վարկեր**

| | |
|---|---|
| Անվանում | **Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության շրջանակներում** |
| Տեսակ | Հիփոթեք |
| Նպատակ | Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ բնակված կամ Լեռնային Ղարաբաղում հաշվառված, առնվազն վերջին երեք ամիսներին 2 փաստացի բնակված կամ վերջին երեք տարում փաստացի բնակված և Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված ընտանիքն է (այդ թվում՝ մեկ անձից բաղկացած), այդ թվում՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տվյալ ընտանիքում ծնված երեխան, բացառությամբ այն ընտանիքների (անձանց), որոնք որևէ ծրագրի շրջանակներում գործուղվել են Լեռնային Ղարաբաղում մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը և վերջին երեք ամիսներին բնակվել են այնտեղ: Պարտադիր բնակության պահանջը տարածվում է ընտանիքի՝ առնվազն մեկ անդամի վրա: Ընտանիքի բացակա անդամները դիտվում են շահառու և ընդգրկվում են տվյալ ընտանիքի կազմում, եթե նրանց բացակայությունը պայմանավորված է բուժման կամ ուսման կամ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայության կամ ազատազրկման դատապարտվածների պատիժը կրելու հետ:<br><br>Ընտանիքի կազմը համալրվել է թոռներով, ինչպես նաև ցանկացած անձով, ով սահմանված ժամանակահատվածում փաստացի (մշտապես) բնակվել է տվյալ ընտանիքում (քաղաքացիական ամուսիններ, խորթ երեխաներ և այլն): |
| Գումարի չափ/միջակայք | **8 մլն դրամ** - Երևանում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեքում<br><br>**10 մլն դրամ** - Հայաստանի Հանրապետության մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում<br><br>**12 մլն դրամ** - Հավելված 2-ում նշված բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում<br><br>**14 մլն դրամ** - սահմանամերձ բնակավայրում* հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում<br><br>**16 մլն դրամ** - Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բազմաբնակարան բնակելի շենքում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու դեպքում |
| Արժույթ | ՀՀ դրամ |
| Ժամկետ | 120 ամիս |

| | | |
|---|---|---|
| Վարկի անվանական տոկոսադրույք՝ | **Արտաքին ֆինանսական աղբյուրից տրամադրված ռեսուրսով վարկավորման դեպքում**<br><br>**8%** - Երևանում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում<br><br>**10%** - Հայաստանի Հանրապետության մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում<br><br>**12%** - Լեռնային Ղարաբաղում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում<br><br>**13%** - սահմանամերձ բնակավայրում* հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու, ինչպես նաև Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բազմաբնակարան բնակելի շենքում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու դեպքում | **Բանկի սեփական ռեսուրսով վարկավորման դեպքում**<br><br>**13%** - Հայաստանի Հանրապետության մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու, սահմանամերձ բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բազմաբնակարան բնակելի շենքում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու, ինչպես նաև ձեռք բերված բնակելի անշարժ գույքը վերանորոգելու դեպքում |
| Վարկի փաստացի տոկսադրույք | **0.48% - 0.50%** | **0.02% - 0.06%** |
| Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ | $$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$ | |

| | |
|---|---|
| Անվանական տոկոսադրույքի փոփոխման կարգ և պայմաններ՝ նախատեսելու դեպքում | չի սահմանվում<br>$A = \sum^{N} K_n$ |
| Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ ադրանց չափ/միջակայք | o գույքի գնահատում՝ 15.000 ՀՀ դրամ |
| Երրորդ անձանց կողմից մատուցվող օժանդակ ծառայություններ | o նոտարական ծառայությունների վճար՝ 15 000- 20 000, ներառյալ ամուսնության վերաբերյալ հայտարարությունների համաձայնագրերը<br>o գույքի պետական գր անցման վճար՝ 72 400 ՀՀ դրամ |
| Վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր | Բացասական վարկային պատմություն, անբավարար եկամուտներ |